

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-ԻՆ
ԺԱՄԸ 15:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ
ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Խորհրդի անդամներ՝

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Գ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Տ. Դավթյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Հ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ
Ն. Երիցյան	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ
Ա. Հովսեփյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն

Հրավիրվածներ՝

Վ. Այվազյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Վ. Հովհաննիսյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Մ. Մելքումյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Ա. Զանջուղազյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետ
Գ. Մուրադյան	ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի տեղակալ

Տ. Գևորգյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Ս. Տոնոյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար
Ա. Բադալյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ, ծրագրի ղեկավար
Ա. Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության առաջատար մասնագետ
Վ. Ասլանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետ
Ք. Ղալեշյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի իրավաբան

1. Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման շրջանակներում (ՀՕՏԾ) առկա հիմնախնդիրների քննարկում և ՀՕՏԾ իրականացման նախնական բյուջեին հավանություն տալու մասին

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի նախնական բյուջեին.

2) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝ ավարտել հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի վերջնական լրամշակումը և ԱԶԲ-ի հաստատումն ստանալուց հետո այն ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը:

2. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի կառուցվածքի փոփոխությունների և դրա հետ կապված միջոցառումները քննարկելու և հավանություն տալու մասին

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի կառուցվածքի և հաստիքների փոփոխությունների վերաբերյալ միջոցառումներին.

2) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ ներկայացված առաջարկներն իրականացնելու ուղությամբ:

3. Այլ հարցեր

(Ն. Երիցյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝ շինարարական կազմակերպության ներկայացուցիչների հետ համատեղ ուսումնասիրել ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյանի ներկայացրած առաջարկությունները և ըստ այդմ կառավարման խորհրդի անդամներին ներկայացնել համապատասխան մասնագիտական եզրակացություն:

4. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 3-ի հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի (<ՕՏԾ>) մշակման շրջանակներում առկա խնդիրների մասին

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ ԱԶԲ-ի կողմից ներկայացված առաջարկներին և մոտեցումներին.

2) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝ մեկնարկել Տրանշ 3-ի ՀՕՏԾ-ի նախապատրաստման աշխատանքները՝ համաձայն ԱԶԲ-ի կողմից ներկայացված պահանջների:

5. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի-Ծրագիր 1-ի շրջանակներում «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի ծրագրի իրականացման խմբի հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ առաջարկությունը քննարկելու և հավանություն տալու մասին

(Կ. Արեյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ ԱԶԲ-ի կողմից «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ին ներկայացված՝ Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի-Ծրագիր 1-ի շրջանակներում «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի ծրագրի իրականացման խմբի հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ առաջարկությանը.

2) առաջարկել Երևանի քաղաքապետի տեղակալ Կ. Արեյանին՝ Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի-Ծրագիր 1-ի շրջանակներում «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի ծրագրի իրականացման խմբի հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ առաջարկը հարցման կարգով համաձայնեցնել կառավարման խորհրդի բոլոր անդամների հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱԴԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ